ՈՒՂԵՑՈՒՅՑ

Տեղական մակարդակում կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության քաղաքականությունների իրականացման

Ուղեցույցը մշակվել է «Էկոլուր» տեղեկատվական ՀԿ կողմից՝ ՄԱԶԾ «Հայաստանի կլիմայական խոստում» ծրագրի աջակցությամբ: Հրապարակման մեջ արտահայտված տեսակետները հեղինակներինն են և պարտադիր չէ, որ ներկայացնեն Միավորված ազգերի կազմակերպության, այդ թվում՝ ՄԱԶԾ-ի, ԱՍԳ գործընկերության, Գերմանիայի, Ճապոնիայի, Եվրամիության, Միացյալ Թագավորության, Շվեդիայի, Իսպանիայի, Բելգիայի, Իսլանդիայի, Իտալիայի, Պորտուգալիայի կառավարությունների կամ ՄԱԶԾ-ի այլ հիմնական ներդրողների տեսակետները:

Գործունեության համաֆինանսավորումը և տեխնիկական աջակցությունը տրամադրվել է «Աշխարհի բողոքական զարգացման ծառայություն» կազմակերպության կողմից:

Բովանդակություն

1. Ուղեցույցի նպատակը 4

2. Ազգային համատեքստը 4

3. Տեղական մակարդակում կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության խնդիրները և քաղաքականությունների իրականացման սկզբունքները 6

4. Տեղական մակարդակում կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության քաղաքականությունների իրականացման ուղենիշները 8

4.1 Իրազեկման բարձրացման և փաստերի հիման վրա որոշումների կայացման գործընթացում 8

4.2 Ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների հավաքագրման ուղղությամբ 9

5. Կլիմայի փոփոխության հարմարվողականությանն և մեղմմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների իրականացումը 10

5.1 Կենցաղային և այլ ծագմամբ թափոնների տեղափոխման, համայնքային աղբավայրերի կառավարման ոլորտում 10

5.2 Համայնքային հողատարածքների կառավարման ոլորտում 11

5.3 Անտառային հողերի անտառապատման և բնակավայրերի կանաչ տարածքների կառավարման ոլորտում 12

5.4 Անասնաբուծության ոլորտում 14

5.5 Էներգախնայողության, վերականգնվող և այլընտրանքային էներգետիկայի ոլորտում 15

5.6 Խմելու ջրի հասանելիություն և կոյուղաջրերի կառավարման ոլորտում 17

5.7 Զբոսաշրջության ոլորտում 17

5.8 Առողջապահության ոլորտում 18

Հապավումներ

ԱՍԳ - ազգային մակարդակով սահմանված գործողություններ

ԱՍՆԳ - Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող ներդրումներ

ԵՄ – Եվրոպական միություն

ԿՓՇԿ -Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիա

ՀԿ – հասարակական կազմակերպություն

ՀՀ – Հայաստանի Հանրապետություն

ՄԱԿ – Միավորված ազգերի կազմակերպություն

ՋԳ – ջերմոցային գազ

ՋՕԸ - ջրօգտագործման ընկերություն

ՏԻՄ - տեղական ինքնակառավարման մարմին

CO_2 - ածխաթթու գազ

GPS - Գլոբալ տեղորոշման համակարգ

1. Ուղեցույցի նպատակը

Ուղեցույցը նպատակ ունի օժանդակելու ՏԻՄ-երին տեղական մակարդակում ինտեգրելու կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության պետական քաղաքականությունները: Այն կօգնի նաև համայնքի հնգամյա զարգացման ծրագրերում, տարեկան աշխատանքային պլաններում և համայնքի տարեկան բյուջեում կլիմայի փոփոխության մեղմմանը և հարմարվողականությանն ուղղված միջոցառումների պլանավորման և իրականացման գործընթացի կազմակերպման հարցում՝ բարձրացնելով կլիմայի փոփոխությանը համայնքների դիմակայունության մակարդակը:

Ուղեցույցը կնպաստի նաև համայնքում և դրա կազմում ընդգրկված բնակավայրերում կլիմայական ռիսկերին (ջերմային ալիքներ, երաշտներ, վտանգավոր և ինտենսիվ կարկուտ, վաղ ցրտահարություն, հորդառատ անձրև, ուժեղ քամի, սառնամանիք, սողանքներ, սելավներ, սեզոնային ջրհեղեղներ, անտառային հրդեհներ, քարաթափումներ, ձնահյուսեր, ձնակուտակումներ և այլն) դիմակայելու կարողությունների ուժեղացմանը: Ուղեցույցում առաջարկված են ինչպես ընդհանուր միջոցառումներ, այնպես էլ կենցաղային և այլ ծագմամբ թափոնների, համայնքային հողատարածքների կառավարման, համայնքային անտառային հողերի անտառապատման և կանաչ տարածքների կառավարման, անասնաբուծության, էներգախնայողության, վերականգնվող և այլընտրանքային էներգետիկայի, խմելու ջրի հասանելիության և կոյուղաջրերի կառավարման, զբոսաշրջության և առողջապահության ոլորտներում կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության միջոցառումներ: Ուղեցույցը կխթանի՝

- Համայնքի ներգրավվածության բարձրացմանը՝ կլիմայի փոփոխության մեղմման ու հարմարվողականությանն ուղղված պետական ծրագրերում
- Տեղական ինքնակառավարման մարմիններին մշակելու կլիմայի փոփոխության հարմարվողականությանն ու մեղմմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի հայտեր, համայնքի տարեկան աշխատանքային պլաններում և զարգացման 4-ամյա ծրագրերում ներառել կլիմայական միջոցառումներ
- Բարձրացնելու կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման մարտահրավերների վերաբերյալ բնակչության իրազեկվածության աստիճանը:

2. Ազգային համատեքստը

Կլիմայի փոփոխություն ճգնաժամը սպառնալիք է ամբողջ աշխարհի, այդ թվում Հայաստանի Հանրապետության զարգացման համար: Հրամայական է կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման համապարփակ, միասնական գործողությունների իրականացումը միջազգային, ազգային և համայնքային մակարդակներում:

Հայաստանի տարածքում առկա են կլիմայի գրեթե բոլոր տարատեսակները՝ չոր մերձարևադարձայինից մինչև ցուրտ բարձրլեռնային: Տասնամյակների ընթացքում Հայաստանում նկատվել է տարեկան միջին ջերմաստիճանի զգալի աճ, ձյունածածկի կրճատում, մթնոլորտային տեղումների նվազում, ջրի սթրեսի ցուցանիշի աճ: Զգալիորեն ավելացել են էքստրեմալ եղանակային երևույթների և դրանց հետևանքով առաջ եկող բնական վտանգավոր երևույթների՝ սելավների, հեղեղումների, տեղատարափ անձրևների, անտառային հրդեհների, կարկտահարության, ցրտահարության, երաշտների հաճախականությունը, ինտենսիվությունը և եղանակային սեզոնային անոմալիաները, որոնք բացասական ազդեցություն են թողնում էկոհամակարգերի, տնտեսության, մարդկանց գործունեության և առողջության վրա:

Հայաստանի Հանրապետությունն ակտիվ ներգրավված է միջազգային կլիմայական գործընթացներում, ստորագրել և վավերացրել է Միավորված ազգերի կազմակերպության Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիան 1993թ. մայիսին: 2017թ. փետրվարին վավերացրել է Կիոտոյի արձանագրության Դոհայի փոփոխությունը և Փարիզյան համաձայնագիրը և ստանձնել է ջերմոցային գազերի արտանետումները սահմանափակելու քանակական հանձնառություններ:

2021թ-ի ապրիլի 22-ին ՀՀ կառավարությունն ընդունեց «Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2021-2030 թվականների ազգային մակարդակով սահմանված գործողությունները հաստատելու մասին» 610- Լ[1] որոշումը՝ հաստատելով 2021-2030թթ. ժամանակահատվածի համար Հայաստանի վերանայված պարտավորությունը Փարիզյան համաձայնագրի ներքո:

Կառավարության կողմից ԱՍԳ-ի վերանայման ժամանակ հաշվի առնված առանցքային նկատառումներն են. ազգային տնտեսության աճի պահպանումը, աղքատության կրճատումը, շրջակա միջավայրի պահպանությունը, կայուն զարգացման նպատակների իրագործումը, միևնույն ժամանակ՝ ազգային էներգետիկ անվտանգության մեծացումը, ինչպես նաև՝ մատչելի և մաքուր էներգիայի մատակարարման ապահովումը:

ԱՍԳ-ն սահմանում է, որ Հայաստանը հանձնառու է մինչև 2030 թվականը[2]՝

- ապահովելու ՋԳ արտանետումների 40 տոկոս նվազեցում՝ 1990թ. արտանետումների մակարդակի համեմատ,
- կրկնապատկելու վերականգնվող էներգիայի մասնաբաժինը էներգիայի արտադրության մեջ,
- անտառի նոր ազգային ծրագրի ընդունմամբ անտառածածկի ավելացում՝ Հայաստանի տարածքի 12.9% չափով:

[1] https://www.e-gov.am/gov-decrees/item/36064/

[2] Ներկայումս ընթանում են ԱՍԳ 3.0-ի մշակման աշխատանքները: Այն կընդգրկի 2026-2035թթ ժամանակահատվածը: Նախատեսվում է, որ բացի բացարձակ, ողջ տնտեսության համար ՋԳ արտանետումների կրճատման հավակնոտ թիրախ սահմանելուց, փաստաթուղթը կսահմանի նաև ոլորտային թիրախներ, կպարունակի հարմարվողականության ընդլայնված նկատառումներ, ինչպես նաև իրականացման պլան և ֆինանսական ռազմավարություն:

Փաստաթուղթը սահմանում է, որ ԱՍԳ-ի իրագործմանն աջակցություն կցուցաբերվի ենթազգային մակարդակով՝ ներգրավելով տեղական համայնքները և խրախուսելով բոլոր շահագրգիռ կողմերին, ներառյալ ՀԿ-ները՝ հաշվի առնելով երիտասարդության և խոցելի խմբերի կարիքները, գենդեր-պատասխանատու մոտեցմամբ:

2021թ. մայիսի 13-ին ՀՀ կառավարությունն ընդունել է «Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագիրը և 2021-2025 թվականների միջոցառումների ցանկը հաստատելու մասին» 749-Լ որոշումը[3]: Որոշմամբ ՀՀ-ն ստանձնել է հանձառություն կլիմայի փոփոխության հարմարվողականության նպատակով 6 հիմնական ոլորտներում՝ գյուղատնտեսություն, ջրային ռեսուրսներ, էներգետիկա, առողջապահություն, անտառային տնտեսություն, զբոսաշրջություն ընդունել ռազմավարություններ և կիրարկել դրանք: Որոշմամբ ամրագրվել են նաև մարզերի համար կլիմայական հարմարվողականության ծրագրերի մշակման մասին դրույթներ:

2023թ. դեկտեմբերի 28-ին ՀՀ կառավարությունն ընդունել է «Հայաստանի Հանրապետության ջերմոցային գազերի ցածր արտանետումներով զարգացման երկարաժամկետ ռազմավարությունը (մինչև 2050 թվական) հաստատելու մասին» N 2318-Լ որոշումը[4]: Որոշմամբ ՀՀ-ն ստանձնել է հանձառություն ջերմոցային գազերի՝ ածխածնի երկօքսիդի, մեթանի, ազոտի ենթօքսիդի, հիդրոֆտորածխածինների արտանետումների մասնաբաժինները «Էներգետիկա», «Գյուղատնտեսություն», «Անտառային տնտեսություն», «Արդյունաբերական գործընթացներ և արտադրանքի օգտագործում», «Թափոն» ոլորտներում կրճատելու վերաբերյալ:

3. Տեղական մակարդակում կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության խնդիրները և քաղաքականությունների իրականացման սկզբունքները

Չնայած նրան, որ կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման ոլորտում ՀՀ-ում ստեղծված են բավարար իրավական հիմքեր այնուամենայնիվ, տեղական մակարդակում կլիմայական քաղաքականության ներդրման մակարդակը բավականին ցածր է: Համայնքներում ցածր է պետական աջակցության մասնաբաժինը կլիմայի փոփոխության ոլորտային հարմարվողականության և կլիմայի փոփոխության մեղմմանն ուղղված միջոցառումների իրականացման և դրանք պետական քաղաքականության հետ համապատասխանեցնելու մասով:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կլիմայի փոփոխության հետևանքով համայնքներում առաջացել են բազմաթիվ խնդիրներ՝ ջրային ռեսուրսների նվազում, բերքատվության նվազում, արոտավայրերի, կերահանդակների և խոտհարքերի դեգրադացում, ոռոգելի տարածքների մակերեսների կրճատում, անասնաբուծության

[3] https://www.arlis.am/documentview.aspx?docid=152612
[4] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=188021

անկում, բնական աղետներով պայմանավորված տնտեսական վնասների աճ, անտառի փեշի բարձրացում, անտառային ծառատեսակային կազմի փոփոխություն և հիվանդությունների բռնկումներ, տնտեսական վնասներ արտակարգ եղանակային երևույթների աճի հետևանքով:

Ցածր է կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման միջոցառումների տեսակարար կշիռը համայնքային տարեկան աշխատանքային պլաններում և հնգամյա զարգացման, ինչպես նաև սուբվենցիոն ծրագրերում: Գնահատված չեն համայնքի տարածքում իրականացվող միջոցառումների կլիմայական ռիսկերը: Գործնական կիրառություն չեն ստանում միջազգային կազմակերպությունների և ՀՀ ոլորտային գերատեսչությունների համագործակցության արդյունքում մշակված կլիմայական ծրագրերի և միջոցառումների իրականացման ուղեցույցները, կարգերը: Ցածր է նաև կլիմայի փոփոխության մարտահրավերների վերաբերյալ համայնքային բնակչության իրազեկվածության աստիճանը:

Այս խնդիրների հաղթահարումը պահանջվում է կլիմայի փոփոխության և դրանով պայմանավորված ռիսկերի գնահատման, ոլորտային միջոցառումների և ծրագրերի մեթոդական աջակցության ցուցաբերում համայնքների աշխատակազմերին, բնակավայրերի վարչական ղեկավարներին և շահառու այլ կողմերին:

Համաձայն ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների հանձնառության՝ կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության քաղաքականության իրականացումը պետք է ապահովեն որոշակի սկզբունքների պահպանումը, որոնք պետք է առաջնորդի նաև համայնքային միջոցառումների և ծրագրերի կազմման և իրականացման գործընթացները՝

- կլիմայի նկատմամբ խոցելիության և սոցիալական հավասարության փոխկապակցվածություն
- գենդերային մոտեցումների խթանում
- բազմաբնույթ վտանգներին արձագանքման ապահովում
- ռիսկերի նվազեցման և համայնքի կայուն զարգացման հավասարակշռություն, էկոհամակարգային մոտեցում
- ներգրավվածություն և ներառականություն
- թափանցիկություն և գիտելիքների փոխանցում
- կլիմայի փոփոխության հետ կապված ֆինանսական որոշումների կայացում ու կառավարում:

4. Տեղական մակարդակում կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության քաղաքականությունների իրականացման ուղենիշները

4.1 Իրազեկման բարձրացման և փաստերի հիման վրա որոշումների կայացման գործընթացում

- Կլիմայական մարտահրավերների, հարմարվողականության և մեղմման ծրագրերի հնարավորությունների վերաբերյալ համայնքի իրազեկվածության բարձրացման նպատակով պարբերաբար դասընթացների, աշխատաժողովների և քննարկումների կազմակերպում:
- Բնակչությանը, ինչպես նաև համայնքի տարածքում գործունեություն իրականացնող խոշոր և միջին բիզնեսի ներկայացուցիչներին՝ համայնքի կլիմայական հարմարվողականության և մեղմման ծրագրերի մշակման գործընթացում ներգրավում:
- Համայնքում էներգախնայողություն և վերականգնվող էներգիայի միջոցառումների պլանավորման և իրականացման համար էներգետիկ կառավարչի հաստիք նախատեսում:
- Տարածաշրջանային կլիմայական տվյալների և կանխատեսումների ուսումնասիրություն՝ հիմք ընդունելով համայնքին մոտ գտնվող հիդրոօդերևութաբանական կայանների և հիդրոլոգիական չափումների դիտակետերից ստացված տվյալների հիման վրա լիազոր մարմիններից հնարավոր տրամադրվող տեղեկատվության ուսումնասիրությունը, ինչպես նաև ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (UNICEF) և Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ (ԱՌՆԱՊ) հիմնադրամի կողմից «Տեղական մակարդակում կլիմայական ռիսկերի գնահատում» ծրագրի շրջանակներում 2023թ. կազմված ուղեցույցները:[5]
- Համայնքում հնարավոր կլիմայական ռիսկերի բացահայտում՝ հիմք ընդունելով համայնքի կլիմայական առանձնահատկությունները:
- Համայնքի համար կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրերի մշակում՝ առաջնորդվելով արդեն իսկ մշակված հարմարվողականության ծրագրերը[6] 4 մարզերի համար (Տավուշ, Շիրակ, Գեղարքունիք, Սյունիք):
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կլիմայական միջոցառումների ամրագրում համայնքի տարեկան աշխատանքային և հնգամյա զարգացման ծրագրերում:

[5] https://www.arnap.am/?page_id=4203
[6] https://drive.google.com/drive/folders/1Jp-IoBfzr2UJXcvPbBF5YhvhjwQojC7e

- Համայնքների կայուն զարգացման և կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրերի և միջոցառումների կատարման առաջընթացի պարբերական մոնիտորինգի, գնահատման և հանրայնացման իրականացում:

4.2 Ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների հավաքագրման ուղղությամբ

- Համայնքային ֆինանսական կառավարման համակարգում կլիմայական նշագրման գործելակերպի ներդնում:
- Սուբվենցիոն ծրագրերի հայտերի մշակման գործընթացում կլիմայական ուղղվածության ընդգրկում՝ նշելով, որ այդ գործողությունները համահունչ են ԱՍԳ-ի շրջանակներում ՀՀ ստանձնած ԿՓ մեղմման և հարմարվողականության հանձնառություններին:
- Համայնքի վարչական տարածքում գործունեություն իրականացնող ընդերքօգտագործող կազմակերպության և համայնքի միջև կնքված կորպորատիվ պայմանագրով կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման միջոցառումների համաֆինանսավորման վերաբերյալ դրույթների նախատեսում:
- Համայնքի կողմից մետաղական օգտակար հանածոների հանքավայրեր շահագործող և մետաղի խտանյութ կամ ձուլվածք կամ հանքաքարի, խտանյութի, ձուլվածքի վերամշակման արդյունքում ցանկացած արտադրանք արտադրող հանդիսացող կազմակերպությունների կողմից վճարվող ռոյալթիների մասնաբաժնի ծախսման ուղղություններում[7] կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման համայնքային կարիքների հաշվի առնում *(ըստ ՀՀ կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 1-ի N 1370-Ն որոշման[8]):*
- Համայնքի վարչական տարածքում արևային կամ հիդրոէներգիայի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների միջև կնքված կորպորատիվ պայմանագրով կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման միջոցառումների համաֆինանսավորման վերաբերյալ դրույթների նախատեսում:
- Համայնքի վարչական տարածքում գործունեություն իրականացնող կազմակերպությունների կողմից վճարված բնապահպանական վճարների մասնահանումների օգտագործման համար մշակվող բնապահպանական ծրագրերում կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության միջոցառումների նախատեսում:

---

[7] ուղղություններն են՝ 1)գյուղատնտեսություն, 2) կրթություն և գիտություն, 3) առողջապահություն, 4) սոցիալական ապահովություն, 5) մշակույթ, սպորտ և երիտասարդության զբաղվածություն, 6) քաղաքաշինություն, 7) ջրամատակարարում և ջրահեռացում, 8) տրանսպորտ և ճանապարհաշինություն, 9) զբոսաշրջություն՝

[8] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=168150

- «Տեղական տուրքերի և վճարների մասին»[9] ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 7-12 կետերին համապատասխան հավաքագրված տեղական վճարների ուղղում կլիմայական միջոցառումների իրականացմանը:
- Էներգետիկ աղքատության կրճատման, բնական, արհեստածին աղետների և կլիմայի փոփոխության ազդեցությունների մեղմման, դիմակայման ու կանխարգելման ծրագրերի մշակման և իրականացման, միջազգային դոնորների ներգրավման համար համայնքապետարանի աշխատակազմում մասնագիտական խմբի ստեղծում:
- Համայնքային բյուջեի ծախսային մասում «տարվա բնապահպանական, կլիմայական, էներգետիկ ծրագրերի, աղետների ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացման ծախսեր» բաղադրիչի ներառում, որը կապահովի տվյալ տարում նախատեսվող կլիմայական միջոցառումների կատարման աշխատանքները մասնագիտական կառույցներին կամ նախորդ կետով նախատեսված մասնագիտական խմբին պատվիրակելը:
- Եթե համայնքը ԵՄ Քաղաքապետերի դաշնագրի անդամ չէ, ապա դաշնագրին միանալու ուղղությամբ աշխատանքների իրականացում:

5. Կլիմայի փոփոխության հարմարվողականությանն և մեղմմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների իրականացումը

5.1 Կենցաղային և այլ ծագմամբ թափոնների տեղափոխման, համայնքային աղբավայրերի կառավարման ոլորտում

Թափոնների ոլորտում կլիմայի փոփոխության մեղմման գործողությունները պետք է լինեն համապարփակ և ընդգրկեն թափոնների ողջ կյանքի ցիկլը՝ դրանց առաջացումից մինչև հեռացում:

- Համայնքում թափոնների տեսակավորման և հավաքման միջոցառումների կազմակերպում՝ նախապես գնահատելով ընդհանուր քանակը, ըստ տեսակների:
- Համայնքի կոմունալ ծախսերում աղբի տեսակավորման աղբարկղերի ձեռքբերման բաղադրիչի նախատեսում:
- Աղբի վերամշակման ձեռնարկությունների հետ համագործակցում համայնքում առաջացած տեսակավորված աղբի իրացման համար: Իրացման արդյունքում առաջացած ֆինանսական միջոցների կուտակում և ներդնում համայնքում աղբահանության որակի բարելավման համար:

[9] http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=110568

- Օգուտի վրա հիմնված տնտեսական խթանների կիրառման ճանապարհով մասնավոր կամ կոոպերատիվ միավորումների ստեղծման խթանում հետևյալ ուղղություններով.
  - համայնքային կենցաղային աղբի և տարբեր տեսակի թափոնների վերամշակման արտադրամասերի հիմնում
  - կենսապարարտանյութերի արտադրության համար օրգանական թափոնների կոմպոստացման համակարգերի ստեղծում
  - կենսազանգվածից այլընտրանքային էներգիայի ստացման համակարգերի ստեղծում:
- Գյուղատնտեսական թափոններից (ծղոտ, ցողուններ) բրիկետների արտադրության կազմակերպում:
- Բնակչության շրջանում թափոնների կրճատման և դրանց ճիշտ տեսակավորման կարևորության մասին իրազեկվածության բարձրացման նպատակով կրթական արշավների անցկացում:
- Համայնքի բնակավայրերում տարերայնորեն առաջացող աղբակույտերի առաջացումը կանխարգելելու համար ՀՀ օրենքով սահմանված վարչարարական լծակների օգտագործում:
- Համայնքի աղբահանությունն իրականացնող օպերատորի հետ կնքած պայմանագրում նրա կողմից մատուցվող բոլոր ծառայությունների (համայնքային աղբավայրի ցանկապատում, աղբի այրման և հրդեհման դեպքերի կանխարգելում, տեղադրված աղբի պարբերական հողատափանում) ամրագրում:
- Համայնքի ներգրավվածության ապահովում թափոնների կառավարման տարածաշրջանային ռազմավարությունների մշակման և իրականացման գործընթացներում:

5.2 Համայնքային հողատարածքների կառավարման ոլորտում

- Միջնաժամկետ և երկարաժամկետ ջրապահանջի գնահատում.
  - համայնքի վարչական տարածքի ջրային ռեսուրսների գնահատում
  - փաստացի օգտագործվող ծավալների գնահատում ըստ ոլորտների (ոռոգման, արդյունաբերական, էներգետիկական, ձկնատնտեսական, ռեկրեացիոն)
  - համայնքի բնակավայրերի, ոռոգման ջրի հեռանկարային պահանջարկի գնահատում (հողատարածքների մակերեսների հաշվարկում)
  - ոռոգման ենթակառուցվածքի վիճակի ուսումնասիրություն և խնդիրների գույքագրում և ըստ սպասարկման պատկանելիության՝ ՋՕԸ-եր, «Վեոլիա ջուր» և համայնքային, հետագա գործողությունների պլանավորում:

- Համայնքային փոքր ջրամբարների կառուցում (կիրառելով բնական լանդշաֆտի առանձնահատկություններ), ձնհալից և ջրաղբյուներից գոյացած ջրի ամբարման և ոռոգման համար: Ջրամատակարարման համար պոմպակայանների օգտագործման դեպքում սնուցումը ապահովել արևային կայանների միջոցով:
- Ջրախնայող տեխնոլոգիաների՝ կաթիլային, անձրևային համակարգերի ներդրման խրախուսում:
- Համայնքում ջերմատնային տնտեսությունների զարգացում, որը կնպաստի ինչպես ոչ բերրի հողերի օգտագործմանը, այնպես էլ ջրախնայող տեխնոլոգիաների օգտագործմանը:
- Ջրակորուստների նվազեցման համար ոռոգման համակարգերի հողային հուների փոխարինում անջրթափանց նյութերով:
- ՋՕԸ-երի կողմից չսպասարկվող ոռոգելի մակերեսների ավելացման նպատակով լրացուցիչ ոռոգման համակարգի ստեղծման ծրագրի կազմում՝ համագործակցելով անհատ հողատերերի հետ:
- Կլիմայական մարտահրավերներին դիմակայելու համար համայնքում երաշտադիմացկուն և ցրտադիմացկուն տնտեսապես ձեռնտու բույսերի աճեցման մշակույթի ներդնում՝ խորհրդակցելով համապատասխան մասնագետների կամ գերատեսչությունների հետ:
- Համայնքում հեղեղումների և սելավների վաղ ազդարարման համակարգերի ներդնում՝ համագործակցելով Ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության և Շրջակա միջավայրի նախարարության մարզային կառույցների հետ:
- Նոր ոռոգելի հողատարածքների ավելացման նպատակով գյուղատնտեսական ջրօգտագործողների կոոպերատիվների ստեղծմանն աջակցում:

5.3 Անտառային հողերի անտառապատման և բնակավայրերի կանաչ տարածքների կառավարման ոլորտում

Համայնքի զարգացման ծրագրերում, տարեկան աշխատանքային պլաններում համայնքային անտառների ընդլայնման ներառում և համայնքներում կանաչ տարածքների ստեղծում՝ որպես կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման գործոն: Հաշվի առնել, որ հասուն անտառի մեկ հեկտարը տարեկան աճում է 1,5 խմ: Տարեկան 1,5 խմ աճի համար անտառը կլանում է 1,8 տոննա CO_2 և որ այդ նախատեսվող միջոցառումներն ուղղված են համայնքային անտառների միջոցով CO_2-ի կլանման կարողության բարձրացմանը և կլիմայի փոփոխության դիմակայմանը:

- Համայնքային անտառներ հիմնելու, պահպանելու և ընդլայնելու համար համայնքում անտառային կոոպերացիայի ստեղծում, որի անդամները կարող են

օգտվել ՀՀ անտառային օրենսգրքի 5-ր հոդվածով սահմանված իրավունքներից և արտոնյալ պայմաններից: Անհատ հողատերերին խրախուսման համար ֆինանսական և արտոնյալ խթանների ստեղծում (օրինակ, հողի հարկի սակագնի իջեցում, ագրոանտառաբուծությամբ զբաղվելու հնարավորություն):

- Համայնքի վարչական տարածքի հողային տարածքների գոտիավորում և պլանավորում, դրանց սխեմաների կազմում:
- Կառուցապատման սահմանափակում՝ հաշվի առնելով, անտառապատման և կանաչ տարածքների ստեղծման հեռանկարը, խոցելի էկոհամակարգերը և վայրի կենդանիների բնակության կրիտիկական գոտիները:
- Համայնքային անտառների ստեղծման և ընդլայնման, կանաչ տարածքների ստեղծման նպատակով հատուկ տարածքների սահմանում՝ հաշվի առնելով նախատեսվող տարածքների աշխարհագրական դիրքը, ջրի մատչելիությունը, համագործակցելով անտառագետների, դոնորական համայնքի հետ:
  - Ծառատունկի նախաձեռնություններին հանրության և կամավորների մասնակցության խրախուսում:
  - Տեղական կլիմային և հողային պայմաններին հարմարեցված տեղական ծառատեսակներ, կամ երաշտադիմացկուն նոր ծառատեսակների օգտագործում:
  - Միջբնակավայրային տարածքներում կանաչ տարածքների և զբոսայգիների ստեղծում:
  - Դաշտապաշտպան և քամապաշտպան անտառային շերտերի ստեղծման աջակցություն:
  - Նոր հիմնված տնկարկների խնամքի իրականացում՝ ոռոգման, կպչողականություն, և լրացման միջոցառումներ:
- Համայնքային բյուջեում հողի ձեռքբերման, ծառատունկի և կանաչ ենթակառուցվածքների զարգացման համար միջոցների նախատեսում:
- Խոնավ տարածքների և գետերի ափամերձ տարածքների պաշտպանությանն ուղղված աշխատանքների իրականացում:
- Բնակչության շրջանում հրդեհային անվտանգության կանոնների պահպանման և անտառների վրա հրդեհների վնասակար ազդեցության վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացում, բուսածածկ տարածքներում և անտառներում հրդեհային անվտանգության տեղեկատվական վահանակների տեղադրում:
- Անտառների և կանաչ տարածքների կլիմայակարգավորիչ դերի մասին իրազեկության բարձրացում:

- Իրականացվող միջոցառումների արդյունավետության պարբերաբար գնահատում և ըստ անհրաժեշտության դրանց ճշգրտում:

5.4 Անասնաբուծության ոլորտում

Հաշվի առնելով, որ ոլորտը ջերմոցային գազերի արտանետման աղբյուրներից է, ինչպես նաև խոցելի է կլիմայի փոփոխության նկատմամբ, կարևոր է իրականացնել ուղղորդված միջոցառումներ.

- Անասնաբուծության համալիր և կենտրոնացված համակարգի զարգացման նպատակով համայնքում անասնապահական կոոպերատիվների ստեղծման խրախուսում:
- Համապատասխան տեխնոլոգիաների, կառավարման մեթոդների և աջակցության մեխանիզմների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում:
- Արոտկառավարման պլանների մշակում՝ հաշվի առնելով հավաքագրված տեղեկատվական բազան, օգտվելով «Հայաստանի Հանրապետության համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների՝ «Բնակավայրերի համար կլիմայի փոփոխության և հարմարվողականության ծրագրերի մշակման վերաբերյալ» մեթոդական ուղեցույցից[10]:
- Արոտ տանող ճանապարհների ցանցի հստակեցում և բարեկարգում:
- Անասնակերի որակի բարելավմանն և արտադրության ծավալների ավելացմանն ուղղված տեխնոլոգիաների ներդնում:
- Շարժական արևային կայանների օգտագործում հեռագնա արոտներում հովիվների կենցաղային կարիքների և կաթի պահպանման համար:
- Անասունների արածեցման կայուն մեթոդների, կերհանդակներում խմոցների տեղադրման գործողությունների նախատեսում, որոնք կնպաստեն հերթափոխային արածեցմանը, կնվազեցնեն կերի պաշարների մակարդակը և կբարելավեն արոտավայրերի որակը:
- Համայնքի ջրային ռեսուրսների հասանելիության, ջրապահպան միջոցառումների և ջրի այլընտրանքային աղբյուրների օգտագործման հնարավորությունների և դրանց լուծման ուղիների գնահատում:
- Ջերմային սթրեսի մեղմման համար ստվերոտ վայրերում անասնապահական համալիրների/անասնագոմերի կառուցման կարևորում, համալիրների հագեցում հովացման համակարգերով, կառուցման համար ջերմակայուն շինանյութերի օգտագործում:

[10] https://api.mtad.am//storage/pages/files/2022/11/pdf/07_12-01-sc796-6368bb5f3eccc.pdf

- Պատվաստումների ծրագրերի, հիվանդությունների հսկողության և կարանտինային հիվանդությունների վերահսկման և կանխարգելման միջոցառումների իրականացման նախատեսում:
- Կլիմայական պայմաններին ավելի լավ հարմարեցված ցեղատեսակների բուծման խրախուսում:
- Միջոցառումների ձեռնարկում ոլորտից առաջացող օրգանական թափոնների կառավարման և շրջակա միջավայրի այդ թվում ջրային ավազանների աղտոտման կանխարգելման համար, կոմպոստացման, կենսագազի փոքր արտադրամասերի ստեղծում, որոնք կնպաստեն օրգանական պարարտանյութերի ստացմանը:
- Անասնապահական համալիրներին էլեկտրաէներգիա ապահովելու համար հնարավորինս վերականգնվող էներգիայի /արևային, կենսագազից ստացվող էներգիա/ օգտագործում:
- Ֆերմերներին կլիմայի համար բարենպաստ մեթոդների կիրառումը խրախուսող ծրագրերի մասնակցման խրախուսում:
- Ոլորտում կլիմայի հարմարվողականության և մեղմման նպատակների առաջընթացի գնահատման համար հավաքագրել տեղեկատվություն՝ տոհմային անասնաքանակի դինամիկա, կերային բազայի աճ, ջերմամեկուսացված և վերականգնվող էներգետիկայով սնվող անասնագոմերի թիվ, տեղական անասնաբուծությունից առաջացող գոմաղբի և կերային մնացորդների հումքով գործող արտադրամասերի թիվ, պատվաստումների ծրագրերի, հիվանդությունների հսկողության և կարանտինային հիվանդությունների վերահսկման և կանխարգելման միջոցառումների թիվ, …):
- Հարմարվողականության և մեղմման ոլորտային ծրագրերի արդյունավետության պարբերական գնահատում և անհրաժեշտության դեպքում ճշգրտումների կատարում:

5.5 Էներգախնայողության, վերականգնվող և այլընտրանքային էներգետիկայի ոլորտում

Տեղական պլանավորման մեջ էներգախնայողության և վերականգնվող էներգիայի ներդրման քաղաքականությունից պետք է օգտվեն համայնքի բոլոր բնակիչները:

- Համայնքային ենթակայության շենքերում և մասնավոր հատվածի առանձնատներում, հանրային և մասնավոր տրանսպորտի շահագործման համար օգտագործվող էներգիայի սպառման քանակությունների հաշվարկում ըստ օգտագործվող վառելիքի տեսակների՝ գազ, վառելափայտ, էլեկտրաէներգիա, կենսավառելիք:

- Յուրաքանչյուր ոլորտի համար էներգախնայողության և էներգաարդյունավետ-տության միջոցառումների մշակում և իրականացում. օրինակ՝
  - Հանրային և մասնավոր շենք շինությունների ջերմամեկուսացում
  - Բարձր արդյունավետություն ունեցող և էներգախնայող կենցաղային տեխնիկայի օգտագործում
  - Փողոցային լուսավորություն էներգախնայող լամպերի միջոցով
  - Արևային ինքնավար կայանների ցանցի ընդլայնում
  - Աջակցություն էլեկտրատրանսպորտի լիցքավորման կայանների տեղադրմանը
  - Դպրոցների, մանկապարտեզների բուժկետերի, վարչական շենքերի շինարարության կամ հիմնանորոգման սուբվենցիոն ծրագրերի հայտերում այլընտրանքային էներգիայի աղբյուրների (արևային էներգիա, կենսագազ) բաղադրիչի պարտադիր ներառում
  - Վառելափայտի ծախսի կրճատման նպատակով, ինչպես նաև ձգտելով զրոյական ածխածնային արտանետման, համայնքի սոցիալական և տնտեսական խնդիրների հաղթահարման նպատակով համայնքում համայնքային արտադրական նշանակության արևային կայանի կառուցման նախաձեռնում
  - Անասնապահության ոլորտներից առաջացող թափոնների օգտագործում էներգետիկ նպատակներով:
- Համայնքապետարանի աշխատակազմում էներգետիկ կառավարչի հաստիքի ներառում:
- Բնակչության շրջանում էներգախնայողության և էներգարդյունավետության վարքագծի ձևավորման համար իրազեկման քարոզարշավի կազմակերպում:
- Էլեկտրաէներգիայի արտադրության համայնքային կայանների կառուցման նպատակով.
  - Համայնքի վարչական տարածքում առկա հիդրո, հողմնային և կենսառեսուրսների պոտենցիալի, կայանների կառուցումից սպասվող օգուտների և վնասների, այդ կայանների կառուցման և երկարաժամկետ շահագործման համար անհրաժեշտ ֆինանսական հնարավորությունների գնահատում՝ համագործակցելով հնարավոր գործընկերների և ներդրողների հետ:
  - Դրված նպատակներին հասնելու համար նախատեսվող գործողությունների ժամկետների և ռեսուրսների սահմանում:
  - Բնակիչների և այլ շահագրգիռ կողմերի՝ ձեռնարկությունների, շահույթ չհետապնդող կազմակերպությունների, միջազգային կառույցների հետ

համագործակցում, այդ թվում ֆինանսական աջակցություն ստանալու և ծրագրի հաջողությունն ապահովելու համար:

- Ծրագրերի նպատակների առաջընթացին հետևելու և բարելավման ոլորտները որոշելու համար համայնքում էլեկտրաէներգիայի արտադրության և սպառման
- մշտադիտարկում և անհրաժեշտության դեպքում բարելավումների կատարում:

5.6 Խմելու ջրի հասանելիություն և կոյուղաջրերի կառավարման ոլորտում

- Համայնքի խմելու ջրի համակարգի ֆիզիկական վիճակի և կառավարման արդյունավետության ուսումնասիրում ըստ «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի և համայնքային սպասարկման տնտեսությունների:
- Հեղեղումներից խմելու ջրի մատակարարման համակարգի վթարների, իսկ երաշտի ժամանակ աղբյուրների ջրհոսքերի նվազման ռիսկերի գնահատում:
- Խմելու ջրապահանջի՝ համայնքի տարածքում հոսող ջրաղբյուրների ելքերի, դրանց հասանելիության և մատչելիության հաշվարկում և համեմատում՝ ըստ ներկա և ապագա կլիմայական սցենարների և համայնքի հնարավոր դեմոգրաֆիկ փոփոխությունների:
- Խմելու ջրի մատակարարման նոր համակարգի ներդրման համար պահանջվող ֆինանսական հնարավորությունների գնահատում՝ սուբվենցիոն ծրագրերով ֆինանսական հայտերի մշակման նպատակով:
- Համայնքային սպասարկման բնակավայրերում ջրաչափերի օգտագործման և խմելու ջրի իրական ծավալների դիմաց վճարման մշակույթի ներդնում:
- Խմելու ջուրն այլ նպատակներով չօգտագործելու վերաբերյալ բնակչության շրջանում իրազեկման աշխատանքների իրականացում:
- Համայնքի կողմից ջրօգտագործման ծառայությունների մատուցման դեպքում համայնքի կողմից ջրահեռացման և կոյուղաջրերի մաքրման աշխատանքների ապահովում այդ թվում համագործակցելով դոնորների հետ:

5.7 Զբոսաշրջության ոլորտում

- Համայնքի վարչական տարածքում տուրիզմի զարգացման ներուժի գնահատում և դասակարգում:
- Համայնքի վարչական տարածքում զբոսաշրջային գոտիների խոցելիության գնահատում՝ ըստ հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների, ենթակառուցվածքների զարգացման տեխնիկատնտեսական

ուսումնասիրությունների իրականացում ընտրված զբոսաշրջային գոտիներում՝ այդ թվում ներգրավելով զբոսաշրջության զարգացման մեջ հետաքրքրված մասնավոր սեկտորին:

- Ըստ առաջնահերթությունների զբոսաշրջային գոտիների խոցելիության նվազեցման և պահպանման միջոցառումների պլանի մշակում:
- Զբոսաշրջային մարդաշատ վայրերում խմելու ջրի մատակարարման, բիոզուգարանների և աղբամանների տեղադրման ապահովում:
- Համայնքներում էներգաարդյունավետ հյուրատների հիմնման և զարգացման խրախուսում:
- Համայնքներում էլեկտրական մեքենաների լիցքավորման կայանների տեղադրման աշխատանքների նպաստում:
- Զբոսաշրջային մեքենաների կայանման հարթակների համար ոչ գյուղատնտեսական նշանակության, դեգրադացված հողատարածքների տրամադրում:
- Հակահրդեհային, հակասողանքային, քարաթափման վտանգի, վայրի կենդանիների առկայության, աղբի թափումն արգելող նախազգուշական վահանակների տեղադրում համապատասխան վայրերում:
- Համայնքի վարչական տարածքում առկա զբոսաշրջային կետերի երթուղու՝ հնարավոր վտանգի դեպքում հետադարձ կապի կոնտակտների առկայությամբ քարտեզների տեղադրում տեսանելի վայրերում:
- Գետերի սանիտարական գոտիներում և հավանական հեղեղման վայրերում հանգստի, սննդի և զվարճանքի կետերի, տաղավարների տեղադրման թույլտվության բացառում:

5.8 Առողջապահության ոլորտում

- Համայնքային ենթակայության առողջապահական հիմնարկների կողմից կլիմայի փոփոխությամբ պայմանավորված արյան շրջանառության, շնչառական համակարգի, մաշկի չարորակ նորագոյացությունների և վարակիչ հիվանդությունների կանխարգելմանն ուղղված իրազեկման միջոցառումների իրականացման խթանում:
- Սպասվող ջերմային ալիքների, անոմալ ցածր ջերմաստիճանների և դրանցից պաշտպանվելու մասին բնակչության իրազեկում՝ համագործակցելով ՀՀ առողջապահության նախարարության հետ:
- ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի, մարզային

սանիտարահամաճարակային կառույցների հետ համագործակցություն՝ սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների իրականացման աջակցում:

- Համայնքի սանիտարական վիճակի բարելավում:
- Համայնքի բուժկետերի էներգաարդյունավետության բարձրացման, արևային ինքնավար համակարգերի և ջրատաքացուցիչների տեղադրման աջակցություն:
- Համայնքի բնակիչների և զբոսաշրջիկների առողջության վրա վնասակար ազդեցության կանխարգելման նպատակով բնակավայրում թափոնների, խոզանների այրման արգելում, բարձր ջերմաստիճանի դեպքում փողոցների ջրցանման աշխատանքների ապահովում: